Հայաստանի բուսական և կենդանական աշխարհը

Հայաստանի տարածքն աչքի է ընկնում կենդանական աշխարհի բազմազանությամբ: Հաշվում են մոտ 12 հազար կենդանիններ, որոնցից 11 հազարը միջատներ ու անողնաշարավորներ, 75 տեսակ կաթնասուններ, 43 տեսակ սողուններ, 308 տեսակ թռչուններ: ՀՀ-ում շատ են նաև կենդանիների էնդեմիկ տեսակները՝ բեզոարյան այծը, մուֆլոնը, կովկասյան փասյանը, հայկական գամփռը, հայկական իժը, առաջավորասիական հովազը և այլն:

Քանի որ կենդանական աշխարհը շարժուն է՝ հստակ արտահայտված գոտիականություն չունի: Կենդանիներից որոշները հանդիպում են գրեթե բոլոր լանդշաֆտային գոտիներում, դրանցից են ՝ գայլը, աղվեսը, նապաստակը: Բոլոր դեպքերում նկատվում է որոշակի գոտիականություն:

Անապատա-կիսաանապատային գոտի

Այստեղ հիմնականում տարածված են սողունները, սարդակերպերը, ճահճոտ տեղամասերում՝ կրիան, կուղբը, եղեգնուտներում՝ եղեգնակատուն, ինչպես նաև սրանցով սնվող կենդանիններ՝ աղվես, օձակեր բազե, արագիլ և այլն:

Տափաստանային գոտի

Տիրապետում են կրծողները՝ պոնտական մուկը, դաշտամուկը, խլուրդը, վայրի կատուն, գետնասկյուռը, ինչպես նաև սրանցով սնվող կենդանիններ՝ անգղը, բազեն, գառնանգղը, արծիվը և այլն:

Անտառային գոտի

Հարուստ ու բազմազան է անտառային գոտու կենդանիները, ընդ որում միմյանցից տարբերվում են հս. արլ. և հվ. արլ. անտառների կենդանիները: Հս. արլ.-ում տարածված են կովկասյան գորշ արջը, լուսանը, վարազը, եղնիկը, իսկ հվ. արլ.-ում՝ բորենին, մացառախոզը և այլն:

Լեռնամարգագետնային գոտի

Լեռնամարգագետնային գոտում հիմնականում բնակվում են թռչունները, իսկ կաթնասուններն այստեղ լինում են միայն ամռանը:

Ձյունամերձ գոտի

Կենդանական աշխարհն ամենաաղքատը ձյունամերձ գոտում է, որտեղ տաք սեզոնին հայտնվում են միջատները և թիթեռների որոշ տեսակներ:

Հայաստանը, չնայած իր համեմատաբար փոքր տարածքին, աչքի է ընկնում բուսական համակեցությունների ու բուսատեսակների արտահայտված բազմազանությամբ, որը

տարածքի բարդ ֆիզիկաաշխարհագրական պայմանների և ֆլորոգենետիկական տեսակետից նպաստավոր աշխարհագրական դիրքի արդյունք է, 1կմ^2 վրա հաշվում են ավելի քան 100 տեսակ, որը աշխարհում ամենաբարձր ցուցանիշներից մեկն է:

Հայաստանի միկոբիոտայի ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել է սնկերի մոտավորապես 4200 տեսակ և ներտեսակային տաքսոն: Հանրապետությունում բնակչության կողմից նախընտրելի են լայն տարածում և բարձր սննդային արժեք ունեցող հետևյալ տեսակները՝ ականջասունկ սովորական (Pleurotus ostreatus), շամպինյոն սովորական (Agaricus campestris), շամպինյոն երկսպորավոր (A. bisporus), յուղասունկ հատիկավոր (Suillus granulatus), լեպիստա մանուշակագույն ոտիկով (Lepista personata), շեկլիկ (Lactarius deliciosus):

Հայաստանում հանդիպում է 143 տեսակ հողային ջրիմուռ: Դրանք պատկանում են հիմնականում կանաչ, դիատոմային, դեղնականաչ և կապտականաչ ջրիմուռներին:

Այսօր Հայաստանից հայտնի է քարաքոսերի 290 տեսակ, ընդ որում ավելի հիմնովին ուսումնասիրվել է Սևանի ավազանը, ուր հանդիպում է 190 տեսակ: Ըստ կենսաձևերի Հայաստանում գերիշխում են կեղևանման քարաքոսերը (մոտ 40%), որոնց մեծ մասը բնակվում են քարերի վրա: Կան նաև տերևանման, թփանման և ումբիլիկատային ձևեր: